



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

3941

281.6

2-22

1868

111

2010

ՉԱՅՆ

ԱՇԽԱՐՏՈՒԹՅԱՆ

«Չափ բարւոյք՝ Թանձարուն, շարժումն, գեղուն ասցի ՚ի գորս
ձեռն. Չի որով շափով շափեք՝ շափեացի ձեզն. Աւեա:



«Ար դնայ ՚ի տը-
րն զլ. ան՝ ոչ գայ-
Թանգիս. Աւեա:

«Ասա՛ անօրինին Թէ մի անօրին
վից. . . Եթէ ոչ քաղցեք քեզ,
անօրինն այն յանօրինու. Թեան
իւրում մեզի, և դու. զանձն
քո ասցիք զուստէս. . . Եսայ:

Ա ՊՈՂՈՍ

— 1888 —

281.6
2-22

uy.

281.6 Printed in Turkey

2-22 uy.

2 U 3 6

A C W U P S M T P K U U

11078

2012



550
39

Կ Ղ Ե Ր

Ե Ի

Ի Ր Ա Ի Ա Ս Ո Ի Թ Ի Ի Ն

ԱՅՍ մօտերս երկու Հայ Առաքելական քահանայից ստորագրութեամբ տեսրակներ և լրագրաց միջոցաւ յօդուածներ երևնալով՝ շատերուն հետաքրքրութիւնը շարժեցին, ուստի մենք ալ պարտաւորուեցանք Ազգին արդի վիճակին վրայ ընդհանուր տեսութիւն մը ընել և մեր սիրելի ազգայնոց ուշադրութեանը յանձնել:

Մեր ազգը երկայն ժամանակ թմրած՝ իւր թշուառ վիճակին անզգայ ու անտարբեր կեցած ըլլալէն ետքը՝ այլևայլ ներքին և արտաքին պատճառներէ շարժեալ (որոց վրայ մասնաւոր կերպով խօսիլ այս գրութեանս չվերաբերիր) ըսկրսաւ քանի մը տարիներէ հետէ կամաց կամաց արթննալ: Այս արթնութեան պտուղը սա եղաւ որ յողովուրդը ճանչցաւ իւր վիճակը, որուն թէ հոգւոր կամ եկեղեցական կացութեան և թէ քանի մը ժամանակաւոր գործերու նկատմամբ (որոց տրամագրութիւնը (Ս-

մանեան Տէրութեան 'ի վաղուց շնորհած արտօնութեամբը (իրեն կը վերաբերէր) . անկարգութիւնը՝ ընդհանուր ցաւալի տեսարան մը կը ներկայացնէր հասարակութեան :

Այ ժողովուրդը 'ի բնէ բարւոյ միաւաքող . սակայն կրօնական և բարոյական կրթութենէ զուրկ ըլլալէ զատ՝ տգիտութեան թանձր խաւարին մէջ : Աղերը զժողովուրդն այս վիճակէն (խաւարէն 'ի լոյս) հանելու , ոչ միայն անկարող , այլև հակառակող և արգելիչ : Քանզի ազգերնուս այս ազդեցութեան տէր մասին (կղերն) վիճակը , ժողովուրդին վիճակէն աւելի ողբալի էր : Աղերական մարմինը՝ ըստ մասին առ տգիտութեան և ըստ մասին առ շարութեան՝ ապականուած ու միանգամայն կծծած էր :

Աղերին այս վիճակին մէջ զարմանք չէր որ եկեղեցական պաշտօնէութիւնը որ նորա գործնէ , իւր բուն և մաքուր նպատակէն հեռանալով՝ գրեթէ արհեստ մը դարձած էր . և քրիստոնէական հրահանգութիւնը իւր աւետարանական և բարոյական զօրութիւնը իսպառ կորսընցունելով , շատ մը արտաքին , նիւթական , մեծաւ մասամբ ծաղրելի արարողութիւններու , խաղերու և ռամկին աչքը շացունող հանդէս-

Ներու փոխուած էր. որոց՝ ժողովրդին ամենէն
պատուական ու լուսաւորեալ մասը իբր ՚ի սո-
վորութենէ և ՚ի ցոյցս միայն, քան թէ քրիս-
տոնէական ոգւով և եռանդեամբ, հանդիսա-
տես կը գտնուէր :

Իսկ ազգին ժամանակաւոր գործերուն
գալով, ազգային Արչութիւնը որ Պօլսոյ
պատրիարքարանն ու անոր հետ կապուած գաւառ-
ներուն Առաջնորդարաննէր պիտի ըլլային, ազգին
մտաւոր, բարոյական և կրօնական վիճակէն
տարբեր չըլլալէն զատ՝ անկէ աւելի ցաւալի էր :
Ազգային Արչութեան կեդրոնէն (Պատրիար-
քարանէն) սկսեալ ամեն տեղ՝ ազգային գործերը,
ազգային հաստատութեանց և ստացուածոց
վարչութիւնն ու մատակարարութիւնը՝ մէկ քանի
եկեղեցական և աշխարհական անձանց իշխանասիրու-
թեան, փառամոլութեան, արծաթսիրութեան,
չատ անգամ նաև յամառ ու ինքնահաճ կամա-
կորութեանը՝ մատնուած . և ասոնց ազդեցու-
թեան ամենէն զօրաւոր միջոցը՝ բռնութեանն ու
հարստահարութեանը եղած էր :

Այս էր համառօտիւ՝ Ազգին վիճակը,
երբ ընդհանուր զգացմամբ ազգը բարեկար-
գութեան դադարիարը յղացաւ :

Բարեկարգութեան գաղափարը հին և ընդ հանուր էր. բայց անոր գործադրութեանը գալով սկսան երկու տարբեր ճամբաներ մտածուիլ: Այլ ինչպէս շատերուն յայտնի է, այս ճամբաներուն մէկն էր ազգը պապական եկեղեցւոյն հետ կցել կամ հպատակեցնելը. որուն արդի լուսաւորչական շայոցս եկեղեցւոյն մէջ, քանի մը դարերէ հետէ մտած սկզբունքներու, թիւր և մոլար վարդապետութեանց և արարողութեանց պատճառաւ արտաքին մեծ նմանութիւն մը արդէն կը տեսնուէր: Սակայն յիշեալ երկու եկեղեցեաց մէջ աս արտաքին նրմանութիւնը տեսնելով ալ՝ ազգին խիստ մեծ մասը պապին հետ միանալու խնդրոյն բարեկամ չերեւցաւ:

Սակայն որ Հոռովի հետ միանալ ըսելը՝ ուրիշ բան չէր, բայց եթէ Սապին գերագոյն իշխանութիւնը ճանչնալ:

Ըսով մեր ազգային եկեղեցին՝ որ մեր Ս. լուսաւորչէն հետէ ինքզինք միշտ ազատ և անկախ դիտէր, պիտի մտնէր այն գերագոյն իշխանութեան տակ, զոր ընդունելու համար՝ թէ ազգային և ընդհանուր եկեղեցական պատմութիւններէն և թէ ՚ի Ս. Կրոց բերուած փաստ

տերն ու ապացոյցները՝ նոյն իսկ եկեղեցական
պատմութեան և Ս. Երոց մէջ իրենց հակա-
սութիւնն ու աւելի զօրաւոր հերքումը կը գըտ-
նեն : Սէկ խօսքով, թողունք ուրիշ պատճառ-
ները, Հռովմէական եկեղեցւոյ գլխոյն ընծայ-
ուած այն մեծամեծ ստորոգելիքները, վերին և
բացարձակ իրաւասութիւն, անօխալութիւն, գե-
րագոյն հեղինակութիւն, որոնք մեր ազգին համար
նոր գաղափարներ են, այս միութեան բարե-
կամներուն առաջարկութիւնը անընդունելի կը-
նէր ազգին առաջը . որ ուրիշ բանէ այնչափ
չխորչիր ու դողար, որչափ որ կղերական Բացա-
յակ տիրապետութիւնէ . . . :

Իբր բարեկարգութեան միջոց առաջար-
կուած այս առաջին ճամբան՝ անգործադրելի
երևնալէն ետքը, հարկ կըլլար աշխատիլ երկ-
րորդ ճամբով . այն է Մ. Ղեբ է-ր Դըն Բարե-
կարգել . այս էր օգտակար միջոց ազգին բարե-
լաւութեանը : Սակայն ոմանք փոխանակ եկեղե-
ցական վերանորոգութեան ձեռնարկելու, այն է՝
ազգային արդի եկեղեցին իւր նախատպին կամ
նախկին Ղուսաւորչական պարզ դրութեանը
վերածելու, ազգային ժամանակաւոր գործերուն
կարգադրութիւնը՝ համարեցին միջոց բարեկար-

դուժեան . և այս գաղափարով շինուեցաւ
Սահմանադրութիւնը , որուն նպատակն էր բոլոր
ազգային գործերը ընդհանուր Ազգին քուէովը
ընտրուած Արեւսփոխանական ժողովի մը յանձ-
նել առանց խտրութեան կղերի և աշխարհականի :

Այնպէս կը կտրուէր թէ այս դրութեամբ
Ազգը կ'ըլլայ մէկ ճարտին , որուն երկու մասերը՝
այսինքն Աղերն ու Աշխարհականը թէոր հաս-
արարէս միանան , յայնժամ բարեկարգութիւնը
թէ ի հոգեորս և թէ ի մարմնաւորս դիւրին
կ'ըլլայ :

Իայց երբ ընդհանուր Ժողովը ազգային
հաստատութեանց և ստացուածոց նկատմամբ
Ազգին իրաւունքը պաշտպանել ուզեց , իսկոյն
կղերը սաստիկ ընդդիմութիւն մը յտրուցանե-
լով ամէն բան տակն ու վրայ ըրաւ (1861) ,
ցուցնելով թէ ինչ կղերն ու ժողովուրդը
իրարմէ զատ մարմիններ կը ճանչնայ . և թէ
երկրորդը պէտք է որ առաջինին հնազանդի :

Այն բանը եղաւ Աղերին կողմէն երկրորդ
Սահմանադրութեան ատենը (1866 մարտ 24) .
երբ Քաղաքական Ժողովին կողմէն անհատ
եկեղեցականներու անկարգ ընթացքը ուղղելու
բարի նախանձ մը տեսնուեցաւ , իսկոյն Պատ-

բիւրեւ իւր կողմակիցներովը մէկ տեղ իրա-
ստ-նեան խնդիր մը յուզելով, յայտնի ըրաւ
թէ՛ այսուհետեւ Հայ Աղերը ազգէն անկախ և
ի վեր է . . . :

Այս երկրորդ փորձով ալ խորհելու տէր
ազգայնոց մտքին առաջը շատ աղէկ պարզուե-
ցաւ թէ՛ Հայաստանեայց տղի իղերը՝ դժբաղ-
դաբար նախնեաց ոգւոյն հաշտակ, Հոռմայ եկե-
ղեցւոյն՝ Աերագոյն հեղինակութեան սկզբունքն
առած ըլլալով, այսուհետեւ բարեկարգու-
թեան կամ Սահմանադրութեան ամեն յոյս
վերցած է : Ասի վճռաբար կ'ըսենք . . . :

Հիմա անհակառակելի ճշմարտութիւն մ'է
թէ՛ պատահանո-նեալ՝ որ մեր ազգին մէջ ալ դա-
րերէ հետէ գործելով շատ բաներ մտցունել
տուած է մեր ազգային Այկեղեցւոյն մէջ, իւր
եկեղեցական Իշխանո-նեան կամ Աստուծաբո-նեան
սկզբունքն ալ հաղորդած է մեր ազգային Աղե-
րին . մեր Աղերը հիմա ինքզինք ժողովրդէն զատ
կը մտածէ : Անոր մտքին մէջ Աղերը չէ թէ ե-
կեղեցիին պաշտօնեայն է, այլ ինքն է եկեղեցի
բացարձակ իրա-ստ-նեան ունեցող : Դողմա-բո-
ւրիչ բան չէ, եթէ ոչ Աղերին հպատակը կամ
գերին . ամենեին արտօնութիւն չունի եկեղե-

ցական բաներու խառնուելու : Աւ յիրաւի՝
քանի որ եկեղեցի միայն Աղերն է . և ոչ խո-
ղով-բոլ . ժողովուրդը չկրնար եկեղեցական
բաներու խառնուել . վասն զի անոնք ոչ թէ
իրեն , այլ Աղերին կը վերաբերին . և որովհետև
մեր ազգը Արօնական մարմին մը ըլլալով անոր
ամեն գործերը եկեղեցական են , ամեն գործ
կղերին կը վերաբերի . ազգը կամ ժողովուրդը
ամենեին գործ մը չ'ունի : Այս եզրակացու-
թեան եթէ բոլորովին եկած չենք , անտարա-
կոյս պիտի գանք՝ ինչպէս նոյն դրութեան օրի-
նակն արդէն ուրիշ տեղ ունինք (Հայոց պա-
պադաւան մասին մէջ) :

Ժողովուրդը կղերին որ և իցէ անկար-
գութեանը դէմ բողոքելու իրաւունք չ'ունի .
քանզի անոնք եկեղեցական են : Այ ծիսական
մասին եղած ծաղրելի սովորութիւններու և
ղեղծումներու դէմ . քանզի անոնք ալ եկե-
ղեցական կամ կրօնական են : Ազգային ստաց-
ուածոց և եկամտից նկատմամբ ալ տրամադրու-
թիւն մը ընելու կամ հաշիւ պահանջելու իրա-
ւունք չունի , քանզի այն ինչքերն ալ եկեղե-
ցական են և կղերին իբր հաւատարիմ պա-
հապաններու յանձնուած : Պատարարակու-

Թեան մասին ալ ազգը շատ բան չըկրնար ընել .
քանզի Արծնահան Ժողով ըստուածը՝ իբր Թէ գե-
րագոյն Գննիչ գրաց ըլլալով, կարող է ուզած
բանը դատաւարութիւն իբրև կրօնքի կամ եկեղե-
ցւոյ հակառակ և մնասակար : Այն խօսքով
կէրը ազգին գերագոյն իշխանը և դատաւորն է .
ըստ որում ըստ իւր քմաց Աստուած կամ Աս-
տուծոյ փոխանորդն է . Ազգը անոր բացարձակ և
կոյր հնազանդութիւն կպարտաւորի . ազգային, քա-
ղաքական կամ ուրիշ որ և իցէ ժողով Թող
խորհի, կարգադրէ, որոշէ . եկեղեցւոյն գե-
րագոյն իշխանը՝ որ է պարբերութեան ժողովուրդը
եթէ կ'ուզէ, կ'ընդունի . եթէ կ'ուզէ, կը
մերժէ . մանաւանդ Թէ ճշդիւ խօսելով ըստ
այժմոս դրութեան կէրին, ժողովըդեան կողմէն
եղած որ և իցէ որոշում կամ բողոք՝ ապօրի-
նաւորութիւն, հերետիկոսութիւն կամ աղանդ
և եկեղեցւոյ գերագոյն գլխոյն դէմ ապրս-
տամբութիւն է :

Այն պարզ և յայտնի կըտեսնուի Թէ
հիմա ազգային կղերը՝ առանց պապին հետ մի-
ացած ըլլալու, պապական է, Անկեցի՝ միայն
կէրն է . Պարբերութեան Հայոց եկեղեցւոյն պատմ
է . ունի կղերին վրայ վերին իրաւասութիւն, բո-

չոր եկեղեցւոյն (աղբին) վրայ գերաբոյն իշխանա-
թիւն, և է նաև անսխալ. և այս պահանջումը
կրնէ. եթէ ոչ խօսքով, անշուշտ գործով . . . :

Սրեմն զարմանք չէ թէ կղերին այս դրո-
թեանը մէջ անշուշտ ազգային բարեկարգութեան
ամեն փորձ Պատրիարքին իրաւաստութեան անշարժ
վիմին զարնուելով պիտի փշրուի :

Մզգը իւր մէջէն բարեկարգել ուղելով
քանի տարիներէ հետէ Սահմանադրութեան հա-
մար աշխատող գլուխները՝ կամ ազգային կղե-
րին ներկայ դէր+ը չէին գիտեր, և կամ եթէ
գիտէին, կը յուսային թէ կրնան այս դիրքը
փոխել: Նայց վերջին դէպ+ը՝ ուր կղերը յայտնի
համարձակ դիմակը վար առնելով իրաւաստ-
թեան սկզբունքը վաւերացունելու ոտք ելաւ,
տեսնուեցաւ թէ՛ ամեն յոյս ազգային բարեկար-
գութեան այսուհետև պարապ է. և ազգը՝ ոչ
օտար, այլ ազգային պատմութեան մը բոլոր պա-
հանջումներուն հնազանդելու պարտաւորուած է:

Մհա ասիկայ տեսնելով՝ ազգին մէջ խուճա-
ք մը եղբարք որ Հայաստանեայց եկեղեցւոյ մէջ
օրինաւորապէս ձեռնադրեալ ամեն աստիճանէ
եկեղեցականներէ և աշխարհականներէ կը բաղ-
կանայ, գայթակղութեանը ևս առաւել հասարա-

կութեան սրտին խորը չք թափանձելու համար,
ազգին մէջ մտած առն արեսակ անկարգութեան մի-
աբան հաւանութեամբ բարեկարգելու համար
ընկերութիւն մը ըրին և Հայաստանեայց Բարե-
կարգեալ եկեղեցի կազմեցին:

Սրբազան Պատրիարքին առաջը իբրև ա-
ղանդաւոր և հերետիկոս նկատուեցաւ յիշեալ
ընկերութիւնը և նկատուելու էր անշուշտ. ինչ-
պէս պատճառը վերը ցուցուցինք, և Ս. Սրան
ալ իբրև ապստամբ և կրօնափոխ մատնուեցաւ,
որով և ազգէն անգամ զատել կամ բաժնել
փորձ եղաւ. սակայն, գոհութիւն Մատուծոյ,
գարս լուսաւորեալ և () սմանեան Վայսրու-
թիւնն ալ արդարասէր ըլլալով՝ պարապը ելաւ
այդ աշխատանքը. վասն զի անցեալ և ներկայ
պատրիարքաց ընթացքն ու վարմունքը յայտնի
էին արդէն նորին Վայսրութեան առաջը. վասն
որոյ ասկէ յառաջ ընկերութիւնը հարկադրե-
ցաւ դիմել առ Մ. զգ. Արեւիոխանութիւնն
յունվար Տի յայտարարութեամբ և անկէ իւր
պատասխանը ընդունիլ:

Մ. զգ բարեկարգութեան ձեռնարկողները
իմացուցած են արդէն թէ իրենց նպատակին
մէջ թագուն բան մը չկայ, և թէ են և կը

մնան հարազատ հպատակ իրենց () գոստա-
 փառ Սուլթանին և երկրին օրինացը հնազանդ-
 վասնորոյ կհրաւիրեն ազգին ընդհանրութիւնը որ
 այս բարեկարգութեան գործին յառաջացմանը
 համար միանան . հաւատալով թէ՛ բարե-
 կարգութիւնը (կրօնափոխութիւն ըսել չէ՛) միակ
 միջոց պիտի ըլլայ մեր համօրէն ազգային լրու-
 թեան՝ սէր , միութիւն , արդարութիւն , խա-
 ղաղութիւն և ամեն հոգևոր ու մարմնաւոր օրհ-
 նութիւններ պարգևելու : (Ե՞նչ է ընչ զե՞նչ
 ունիցի՞ք և առաւել ևս ունիցի՞ք : Մասին :

Իսկ անուղղադատ և շլամիտ ազգայ-
 նոց ոմանց ալ՝ իբրև պատասխան Վամադիէլի
 հետևեալ խօսքը ուղղելով կը վերջացունենք
 մեր այս առաջադրութիւնը . (“Նիէ յԱստուծոյ
 է խորհուրդս այդ կամ գործ , ոչ կարէ՛ք խախտել ” :



Բարեկարգեալ էկեղեցւոյ դրո՞նեան հիմունքը
 հեռեւեալներէն կրնայ պարզապէս հասկցուիլ :

1 . Հայաստանեայց բարեկարգեալ եկե-
 ղեցին՝ Տէ . այսինքն եկեղեցին կայուցանողը
 կղերը չէ , այլ Աստուծոյ ժողովուրդը՝ կղերն

ալ հաւասար ժողովուրդ ըլլալով Աստուծոյ
ամբողջ եկեղեցի կրկազմուի . որուն քուէովը
կ'ըլլայ ամեն որոշում . և կղերը իրեն յանձ-
նրուած պաշտօնէութեան իրաւունքէն զատ ,
ուրիշ իրաւասութիւն մը չկրնար իրեն սեփա-
կանել , և ոչ ալ ժառանգաւորութիւն մը ու-
նենալ եկեղեցւոյն կրօնական հաստատութեանց
և ստացուածոցը , այն է Աղօթարաններուն ,
Սանքերուն (որբանոց , հիւանդանոց , աղքա-
տանոց) ևն :

2 . Հայ . Ռար . եկեղեցին՝ ոչ թէ պա-
պական , այլ լուսաւորչական (ժողովրդական)
սկզբունքով , այսինքն կէրը չէ թէ եկեղեցւոյն
իշխանը , այլ պաշտօնէայն ըլլալով ունի եպիս-
կոպոս , վարդապետ , քահանայ , սարկաւազ և
ուրիշ պաշտօնեաներ , որոց կացութեանը նկատ-
մամբ հիմնական կարգադրութիւնները եկեղե-
ցին կ'որոշէ , այն է ժողովրդին ձայնովը կամ
քուէովը ընտրուած երեսփոխանական ժողովը :

3 . Հայ . Ռար . եկեղեցին՝ Աստուա-
շունչ Մատեանը , այն է հին և նոր կտակա-
րանը միայն , կ'ընդունի կանոն հաւատոց և բարի
վարուց . որուն սորվեցուցած գլխաւոր և էա-
կան վարդապետութիւնները՝ Վիկիոյ հանդանա-

կին մէջ պարունակուած են որ Աստուծոյ
կրկնուի (պատ. Տիեզեր. Ժողովոյ. Երեւ. 58):

Կ. Հայ. Նար. եկեղեցիին հիմնական
սկզբունքն է Բարեգործութեան. ուստի և տնտեսութեան
համար ունի մի միայն ժողով՝ ժողովրդին երես-
փոխաններէն բաղկացեալ:

Աւրիշ վարդապետութեանց, ինչպէս նաև
արարողութեանց, եկեղեցւոյ կառավարութեան
և եկեղեցականաց վիճակին վերաբերեալ իրաց
մէջ անհրաժեշտ պէտք եղած բարեկարգու-
թիւնը՝ եկեղեցին այն է երեսփոխանական ժո-
ղովը մեծագոյն մասով որոշած է հետևեալ
կերպով:

Ա. Հայաստանեայց բարեկարգեալ եկե-
ղեցին որ նախկին Աստուծոյ հայկական եկեղեցւոյն
ճշմարիտ պատկերն է, տասնաբանեայ պատուի-
րանքը իւր նկարագրական մտքովը ընդունած
ըլլալով՝ արձաններու, պատկերներու, մա-
սունքներու և ուրիշ որ և իցէ նիւթական բա-
ներու Աստուածական պաշտօն, զոր օրինակ
աղօթք, խնկարկութիւն կամ երկրպագութիւն

(որոնք, մի միայն Աստուծոյ սեպհական են) չմատուցանէր. ոչ ալ կը հաւատայ թէ զանոնք օծելով կամ ուրիշ արարողութեամբ անոնց գերբնական զօրութիւն մը կը տրուի կամ անոնք Հոգւոյն սրբոյ շնորհաց միջոցներ կրնան ըլլալ:

Բ. Ակրտութիւնն ու Հաղորդութիւնը ի Քրիստոսէ հաստատուած Ա. Խորհուրդներ կ'ընդունի: 'Արոշմը' իբրև կնիք դաւանութեան ի նշան նէրքին օծութեան շնորհաց Հոգւոյն սրբոյ, մկրտուածներուն վրայ խելահաս ըլլալէն ետքը կը կատարէ: Չեւնադրութիւնը իբրև առաքելական կարգադրութիւն, ընտրուածներուն վրայ կը կատարէ: Ամուսնութիւնը իբրև Աստուածային և բնական օրէնք ընդունած ըլլալով, ամուսնացելոց բարոյական դաշինքը (բաց ի քաղաքականէն) իբրև Աստուծոյ առաջը կատարուած Ա. ուխտ մը Պատկով կամ Օրհնութեամբ վաւերացունելը էական կը համարի, և ճիւղահամարութիւնը իւր հիմնադրէն կ'ընդունի (Պէտացւոց ԺՎ. և Ի.): Ահանջալուր խոստովանութիւնը իբրև օգտակար միջոց ապաշխարութեան և 'ի յորդոր առաջադրութեան, և եղբայր եղբոր հետ հաշտեցունելու համար իբրև միջնորդ և բարեխօս հաշտութեան

Բնական

կը գործադրէ : Հիւանդաց բժշկութեան և մե-
ղաց թողութեան նաև միմեանց յաղորդութեան
և բարիլաւութեան համար առ Մատուած արու-
թելը՝ իբրև ընկերութեան պարտաւորութիւն՝
կը կատարէ :

Գ. Հաղորդութիւնը իբրև Քրիստոսի մեծ
և նուիրական սիրոյն փոխադարձ յարաբերու-
թիւնը և շարժարանաց յիշատակութիւնը և նո-
րին մարմնոյ և արեան Ս. Հաղորդութեան ,
այն է հաւատքով Քրիստոսի հետ միանալու
Ս. Խորհուրդը՝ կը կատարէ . և իբրև Քրիս-
տոսի իւր հաւատացելոյ հետ հաստատած՝ նոր
ուխտիւր կը բեկանէ զհացն , որով կը հաւատաց
օրհնեալ հացին և գինւոյն տեսակին տակ՝ Քր-
իստոսի ճշմարիտ ներկայութիւնը . յորմէ ճա-
շակողները իրարու հետ ալ սիրոյ կապակցու-
թեամբ հաղորդուելով կը պարտաւորին միա-
նալ և լինիլ մի անձն և մի մարմին , իբրև ցորե-
նի հատեր Քրիստոսի արիւնովը (սիրովը) շաղ-
ուած ու միացած իբրև մէկ հաց մէկ մարմին ,
մի և նոյն տէրունական սեղանւոյ սիրահաղորդ
միութեան ուխտին Ս. հացէն վայելած ըլա-
լով փրկութեան ու կենդանութեան մէջ մնա-
նելու և աճելու համար :

Գ. Մատուածային Ս. Պաշտամունքը չորս
որոշ մասերէ բաղկացեալ ըլլալով (այսինքն
գոհարանութիւն և աղօթք. հոգևոր երգ կամ
սաղմոսերգութիւն. Ս.Պարոց ընթերցմունք,
քարոզութիւն բանին կամ յորդորակ), և ասոր
ոճն ու կարգադրութիւնն ալ նախնեաց կար-
գադրած գաղափարին վայ հիմնեալ ըլլալով
անսնցմէ աւանդուած Դամադիրքը, Շարականն
ու Տաղարանը. հրապարակական պաշտամանց մէջ
ըստ գովելի սովորութեան նախնեաց առաւօտ
և երեկոյ կը գործադրէ ըստ տրամադրութեան
«Պարկեր Հայաստանեաց Լուս. Ս. Եկեղեցոյ»
գրգին :

Ե. Ս. Հրեշտակներն. ու սուրբերը կը-
յարգէ և անոնց յիշատակութիւնը կը կատարէ,
անանց առ Մատուած ունեցած ջերմ սիրոյն և
բարի վարուցը նմանելու նպատակաւ. նաև բո-
լոր տէրունական տօները կը պահէ, ոչ վասն
հրամանի՝ այլ ի սիրոյ փրկչին : Իսկ Մատուա-
ծային Ս. Պաշտամանց առարկայ մի միայն
զՄատուած կ'ընդունի. ուստի և ամենասուրբ
Ներորդութենէն զատ՝ մէկու մը իւր աղօթք-
ները չ'ուղղէր,

Զ. Երաժշտութիւնը ի ս'ղբանէ հետէ

Մատուածային Ս. պաշտամանց և փառաբանու-
թեանց մէջ իբրև սրտաշարժ գործի ըլլալով ։
Մաքիլաշաւիղ նախնիքներէն Ս. Վրոց հա-
մաձայն յօրինուած վսեմ և իմաստալից շարա-
կաններն ու հոգևոր երգերը իրենց բարեվայե-
րուչ և քաղցր եղանակներովը , և ըստ պատ-
շաճի և ըստ տեղւոյն երգէհոնաւ կ'երգէ ։

Է. Եկեղեցական զգեստներուն ձևը կը
պահէ աւելի պարզ նիւթերէ ըլլալով . նոյն-
պէս և սեղանի ծածկոցը պարզ և մաքուր
կտաւէ . տասներկու աշտանակ , մէկ աւետարան ,
մէկ խնկանոց կամ բուրվառ . մէկ սկիհ և մէկ
գաւազան բաւական համարելով ։ Նոյնպէս և
պաշտօնէից արտաքին ձևն ալ չ'ուզէր փոխել ։

Ը. Հայ . Ռար . Եկեղեցին բոլոր սրբա-
զան մատակարարութիւնները ձրի կը բաշխէ .
այսինքն՝ մկրտութիւնը , ձեռնադրութիւնը ,
պսակը , հիւանդաց համար աղօթքը , ննջեցեալ-
ներուն յուղարկաւորութիւնը , ևն . ասոնք բե-
ւորն ալ ձրիապէս կը մատակարարուին . գիտնա-
լով թէ՛ հոգևոր շնորհքը ստակով վաճառելը
քամահրելի սիմոնականութիւն է ։

Թ. Հայ . Ռար . Եկեղեցին՝ գանձանակ մը
ունի ինչպստ աղքատաց և կարօտելոց . քանզի

ամեն քրիստոնեայ ըստ օրինաց պարտական կը-
ճանչնայ ինքզինք , յօժարակամ սիրով իւր
ստացուածքէն տասանորդել աղքատներուն իբրև
Մատուծոյ , նոյն իսկ եկեղեցւոյ գերագոյն
հեղինակէն (Քրիստոսէ) սահմանեալ :



1 . Հայաստանեայց բարեկարգեալ եկե-
ղեցին՝ առանց քննութեան , այսինքն մինչև
ընտրելի անձին տաղանդը , վարքն ու բարքը չը-
փորձէ , ձեռնադրել չտար . և կամ տգէտ
մէկու մը չը յանձնէր իւր հոգևոր պաշտօնը ,
այն է՝ եպիսկոպոսութիւն , վարդապետութիւն ,
քահանայութիւն կամ երէցութիւն և սարկա-
ւազութիւն . Եւ , օրոնք ամուսնացեալ , բա-
րեպաշտ ընտանիք և իւրեանց տան բարւոք վերա-
կացութիւն և գութ ունեցողներէն կընտրուին .
և իբրև կարեկից բժիշկ ըստ հոգևորին՝ պէտք
է հմուտ և ներհուն ըլլան իմաստից սուրբ
Քրոց և լցեալ ուսմամբ՝ իբրև կրօնագէտ , բա-
րոյագէտ , տնտեսագէտ , իրաւագէտ և բնագէտ
կատարեալ Մատուծարան փիլիսոփայի մը
պէս . որոցմով նաև Հայաստանեայց եկեղեց-

ւոյն մինչև ցայսօր խափանուած Մ. աքելու
Թիւնն ալ կը վերահաստատուի :

2. Հայ . Քար . եկեղեցին՝ իբրև Քրիս-
տոսի ընդհանրական և առաքելական ուղղափառ
եկեղեցւոյ մարմնոյն մասը՝ Ս. Մ. Ետարանին
բարոյական միութեան Ս. Ռեխտը ի սկզբանէ
հետէ ընդունած ըլլալով , Քրիստոսի ճշմարիտ
և հարազատ աշակերտի մը պէս (Յովհ. Ժ. Գ. 35)
ընդհանուր բարեկարգեալ քրիստոնէից եկե-
ղեցեաց հետ համակրական սիրոյ և միութեան
ողջոյնը միշտ համբուրիւ սրբութեան ընծայած
է և կ'ընծայէ պատուիրազանց չգտնուելու հա-
մար :

3. Հայ . Քար . եկեղեցին՝ բարոյական
առմամբ ղինուորութիւն ստանձնած ըլլալով
աշխարհի , այսինքն մարդկային ղեղձեալ բնու-
թեան և կրից դէմ , պարտք կը ճանչնայ իրեն՝
յօղթանակել զօրութեամբ Ս. Հոգւոյն և
ջանալ իւր գործերը համակերպել Ս. Մ. Ե-
տարանին , որ իւրաքանչիւր Քրիստոնէին պար-
տականութիւնն է իւր կեանաց երջանկութեանը
համար : Քանզի մարդս ի սկզբանէ հետէ Թե-
լադրութեամբ չարին կամ կրից՝ ապստամբ
գտնուելով ընութեան օրէնքին և պատուիրա-

Նաց արարչին, զըկուեցաւ ի շնորհաց Մատ-
ուած գիտութեան և կարօտացաւ վերանորոգու-
թեան, յարութեան կամ վերակենդանութեան
մի միայն Մատուծոյ շնորհքին (Քրիստոսի) մի-
ջոցաւ (Տիտ. Բ. 11) վերստին երկնից թա-
գաւորութեան ժառանգ ըլլալու համար:

4. Հայ. Բար. եկեղեցին՝ աշխարհիք և
քեր առմամբ կը զանազանէ, բարոյական, քաղա-
քական, բնական կամ Ֆիզիկական, այսինքն՝ ճարտ.,
արհեստագործական կամ կուսակարգական, և երկիր կամ
բնակութիւն ուստի և այս սկզբունքով հողե-
ւորը՝ հողւոր, մարմնաւորը՝ մարմնաւոր և երկ-
րաւորը՝ երկրաւոր կը նկատէ համաձայն սուրբ
Երոց. որոնք տարբեր գաղափարներ կ'ընծայեն
մարդկեղէն մտաց և ոգւոյն զոր օրինակ՝ պահոց
կամ պահեցողութեան նկատմամբ ի հողւորի,
բարոյականը՝ քաղաքականէն և բնականէն կ'ո-
րոշէ՝ հետեւեալ կերպով. սրբի պահք, սպա-
հոտի պահք. քաակի պահք. որոց մէջ առաջինը
միայն բարոյականին կամ հողեղինին հետ առն-
չութիւն ունի. (Մատ. Ժ. 19) Իսկ քականը
արհեստականութեան և ստամոքսինը ստորագործու-
թեան կը վերաբերի. վասն որոյ պարտական է
մարդս իմաստութեան լուսով սոյն երեք կէ-

տերուն ալ միանգամայն հսկել իրաւամբ և ար-
դարութեամբ . Արարչէն պարգևեալ անձնական
պիտոյքները բարոյապէս , տնտեսա պէս , և
Ֆիզիգապէս կարգադրելով ըստ օրինի՝ և խու-
սափել զգուշութեամբ այն վտանգներէն՝ ու-
րօնք ծահ , աւանդութիւն և կորուստ կը պատճա-
ռեն . ուստի պէտք է բարոյականը՝ բարոյակա-
նին , քաղաքականը՝ քաղաքականին և բնականը՝
բնականին տալով , ամենայն արժնութեամբ ա-
պահովել իւր ներկայ և տագայ վիճակը :

5. Հայ . Քար . եկեղեցին՝ քրիստոնէութեան առաջին դարերուն մէջ գումարուած ե-
րեք տիեզերական ժողովները միայն կը ճանչնայ
որք են՝ Անկիոյ , Ա . Պօլսոյ և Ալիեսոսի Ա .
Ժողովները . սուրբ Առսաւորչէն (302) մինչև
Արիստակէս (325) Մեծն Աերսէս (381) և
Սահակ Պարթև (431) Առաքելաշառիչ Ա .
Հայրապետները . ուստի և Ա . Վրոց համա-
ձայն նախնեաց բոլոր հաքաղատ գրուածքները
կընդունի՝ իբրև գանձ Հայրենի : Իսկ հեղի-
նակներն անձանօթ և Ա . Վրոց հակառակ
վարդապետութիւն պարունակող գրուածները
ի բնէ հերքած ըլլալով ասկէ ետքն ալ այնպի-
սիներուն յարգ չընծայէր , աա իրաւամբ և

պայմանաւ թէ՛ ինչ որ Մատուածաշունչ Ս.
Վրբին սուրեցաւցած էն դուրս է, անվաւեր և
անընդունելի է. վասն զի Մատուածաշունչ մա-
տեանն է. Քրիստոնէական վարդապետութեանց
հիմն ու փորձաքարը և իրաւաբանութեան աղ-
բիւրը. ուստի և անկէ՛ դուրս ամեն փորձ կամ
բաղդատութիւն ոչինչ կը սեպէ :

Յ. Հայ. Տարե. Եկեղեցին՝ ինչպէս մինչև
ցայսօր իւր Առաւորչեան հանգանակին տէրն ու
պաշտպանն եղած է, այսուհետև ալ իբրև վահան
ճշմարտութեան տէր պիտի կանգնի. նոյնպէս
կրօնական կամ ազգային ստացուած ոց և հաս-
տատութեանց ալ տէր և պաշտպան պիտի ըլ-
լայ. որոց օրինաւոր անտեսութիւնն ու մատա-
կարարութիւնը իւր հսկողութեան տակ իրեն
կը վերաբերի, և չէ՛ թէ օտար դրութեան և
գաղափարի ծառայող կեղծն. որոց ձեռքը
իբրև ժառանգական յաւիշտակութիւն ըլլալը
մինչև ցայսօր՝ մեծ զրկանք եղած է որոց և
այրեաց հարազատ զաւակաց Առաւորչական Ս.
Եկեղեցւոյն. վասն որոյ զանոնք կրկին իրեն
վերադարձունելը իւր անբռնաբարելի իրաւ-
ւունքն է :



Մեծի սրահ — զի հեղինակուած նորահաս լատին
դասակարգութեանց հիմնարկերը հեղինակներն են :

Ը. Վլադի եկեղեցաց կամ Քրիստոսի փո-
խանորդ կոչել տուող, Կիւրապետութեան Անտոն
սահմանող և անկէ՛ք հնարող վարդապետու-
թիւնը (455) :

Ր. Քաւարան կամ մարտանոց (խարանքիւնաց)
ըսուած վարդապետութիւնը (590) :

Տ. Ս. Հաղորդութեան նպատակին դէմ՝
Պայտիսիոսիւն կոչուած վարդապետութիւնը
(715) :

Գ. Քահանայից ներողութեան իշխանութեան
յանձնող և անունցմէ իրրե Սատուծոյ թողու-
թիւն դատած համարել տուող վարդապետու-
թիւնը (461. — 1847) :

Կ. Պահոց կերպին և նպատակին դէմ՝
Կերահորհրան իտիք և արգելք դնող վարդա-
պետութիւնը (595) :

Զ. Ողջախոհութեան դէմ՝ ամուսնութիւնը
տիղձ համարող և արգելող վարդապետութիւնը
(1039) :

Է. Կուսակրօնութեան նպատակին դէմ՝
վարդ մը ճանողութեան սնուցանող և կամ ճառ

Տարեգրութեան հետոյ, և իբր սրբակեցիկ
հրեշտակաց կրօնք համարել տալով՝ նորա ձեռքը
Մաղնորդութեան պաշտօն յանձնող վարդա-
պետութիւնը (1321) :

Ը. Սուրբերուն՝ ամենուրեք կարծեցնել
տուող և անոնց խնդրուածք, խունկ, մամ
կամ Մատուածական պաշտօն ընծայել տուող
և իբր անոնց բարեխօսութեամբ և ժեշտո-
ւեամբ՝ շնորհք կամ փրկութիւն յուսացնել
տուող վարդապետութիւնը (1620) :

Թ. Նիւթեղէն բաներու կամ որ և իցէ
Նիւթէ խաշանչանաց այլ և պարկերաց կամ արձա-
նաց օծմամբ կամ օրհնութեամբ իբր սրբաց-
ուած, նաև զուրկ իբր դերբնական դորութիւն
առած համարել տուող . այլ և ճատածոք կու-
ուած ասկորներուն պաշտօն կամ երկրպագու-
թիւն ընծայել հրամայող և փոխարէն հրաշք
կամ բժշկութիւն և ուրիշ որ և իցէ Մատուա-
ծական ներդործութիւն աշխատել տուող վար-
դապետութիւնը (849) :

Փ. Ապիսկոպոսաց կամ քահանայից վախ-
ճանած ատեն դեակը օծելով պաշտել տուող
վարդապետութիւնը (1341) :

ՓԱ. Ակեղեցւոյն կարգ մը հողեր մատ-

տակարարութիւնն ու կարգադրութիւնները բուն
երկու սրբազան խորհուրդներուն կարգէն հա-
մարել տուող վարդապետութիւնը (1146) :

Յի . Աւետարանացութիւն հնարող և աղ-
օրհներով գանազէնութիւն (Ճատաղ) ընել
տուող և Մատուածային շնորհք յուսացնել
տուող վարդապետութիւնը (674) :

Մ. հա ասոնք են մոլորեցուցչին ի գործ
դրած զեղծմունքները, որոնք յարեւելից և յա-
րեւմտից յորդան տալով իբրև ժանտախտ ճա-
րակեցին ընդ ամենայն աշխարհ, և որուն պրղ-
ծութեան գաւաթէն խմեցին ամեն լեզուներ,
նոյնպէս և Հայաստան (Ալիկիա) 1349ին,
որոն գէմ երկար ատեն դիմադրեց նախնի
Հայաստանեայց Եկեղեցի, և մեր նախնիք հա-
լեցան և մաշեցան. փան զի նեւն հնարքովը
բուն Քրիստոնէութեան ոգւոյն և սկզբանց
դէմ վարադոյր մը քաշուեցաւ յարեւմտա պա-
պականութեան և յարեւելս յունականութեան
ձեռք : որոնք մեծ կոշուելու, փառք և իշխա-
նութիւն որտալու երկրաքարչ նկատումներով
և տիրապետական կամ տիեզերակալութեան նը-
պատակներով Քրիստոսի ընդհանուր Եկեղե-
ցին իւր միութենէն և սրբութենէն մերկել է

մաս մաս յօշատել ժպրհեցան, և մեծամեծ զրկանքներով քրիստոնեայ ազգաց իրաւունքն ու անկասութիւնը, այն է՝ Մատուց պատգամ հին և նոր կտակարանը և սիրոյ Ս. ուխտի հիմնադրին (Քրիստոսի) Վիսաւորութիւնն ու պաշտօնը յաւիշտակել փորձեցին:

Սակայն մերս նախնի առաքելաշաւիղ Ս. Հարք, քաւ թէ՛ Քրիստոսի հրամանին հակառակ այդպիսի ոճիրներ դործած և վատ ու անօրէն խորհուրդներ մտաբերած կամ նոր վարդապետութիւններ հնարած ըլլան, այլ մանաւանդ բողոքած են և կը բողոքեն ցարդ՝ այդ հաւատոյ մաս կարծուած մոլար վարդապետութեանց, այն է՝ մաքդապաշտութեան, նիւթապաշտութեան, պատկերապաշտութեան, ոսկորապաշտութեան, ջրապաշտութեան և բոլոր այն ամէն նախապաշարմանց և աւելորդապաշտութեանց դէմ. ինչպէս ազգային պատմութիւններն ու հնութիւնները իսկ և իսկ կը լուսաբանին մեր այս բաւձները:

Մըդէն շատ անգամ դրուած ու փաստերով ալ ապացուցուած է թէ՛ միջին դարու յուճական և օնիթոռեան անդրալեռնականութեան մոլորութիւններէն շատ բան սպրդած և

ժառար դրիչներ խաղցած են մեր եկեղեցական
դրեանց մէջ, որոց ոճերէն, հին կամ թէ նոր
ըլլալէն կրնայ հասկցուիլ, և անանկներ ալ
կան՝ որք իրենց անճոռնի իմաստակութիւնները
կրկնեցնել տալու նպատակաւ. նախնեաց անուան
վերածել փորձած են. որոց արդէն խարդախ և
անվաւեր և խնդրոյ ներքե ինկած ըլլալին շա-
տերուն յայտնի է. ասոնցմէ է նաև Վաչանց
քեր ալ . . . :

Այն որ Ս. Գրոց համաձայն չէ, անվաւ-
ւեր է. իսկ որ համաձայն է, վաւերական,
ուստի և ընդունելի. և քանի որ հասարակաց
օրէնաց և ճարտարեւոյ Քրիստոս է, նոյնպէս և
իրաւարտութեան աղբիւրն ալ Ս. Գիրքն է.
ուստի թէ Հայ, թէ Հրէայ, թէ Հելլենացի
և թէ Աւրոպացի, ով կ'ըլլայ՝ թող ըլլայ,
քանի որ ճշմարիտ Աստիային կը հետևի, և
Ս. Գիրքին կ'հստատակի, անշուշտ պէտք է որ
նորա սովորեցուցածին համաձայնի: Աւստի կը-
հերքենք ու կը մերժենք բոլոր այն զրպարտու-
թիւնները՝ որով զրպարտել կը ջանան անդէտք
ովանք և շաւիտք և իրենց առաձգական վարդա-
պետութեամբ փաստարանել և մեր նախկին Ս.
Հարց պատիւը արատաւորել փորձել կուզեն.

անմտաբար . մանաւանդ այսպիսի լուսաւորեալ
 դարու մը մէջ՝ յորում լոյսը աշտանակի վրայ է
 և չէ թէ ընդ գրուանաւ . և զարմանալին այն է
 որ տակաւին ընդդէմ խղճի , խաւարին լոյս
 և լոյսին խաւար ըսելով հասարակութիւնը խա-
 բել կ'ուզեն . որպէս զի այդպիսի նախապա-
 շարմունքներով վերստին ազգը տղիտութեան
 փարտարոսը գլորել յաջողին և իբրև կոյճ
 գործի իրենց կրկն մեքենայապէս ծառայեցու-
 նել կարող ըլլան , ինչպէս մինչև ցարգ նորա
 անտարբեր , թմրած և կիսամեռ մնալուն ջանացեր
 էին՝ թուլցունելով զանի արթնութենէ , միու-
 թենէ , ի սիրոյ , արիութենէ , արդարութենէ
 և Հայրենասիրութենէ :

Երդ մեք Ղուսաւորչեան Հայքս՝ իբրև
 ճշմարիտ հետևող առաքելաշաւիղ Ս . Հօրն
 մերոյ Վրիդորի Ղուսաւորչին և անկեղծ ու հա-
 րազատ զաւակունք մօրս լուսոյ Հայաստանեայց
 Ս . Եկեղեցւոյ , կը հերքենք ու կը մերժենք այդ
 թիւր և մտար վարդապետութիւնները . զորոնք
 վերը յիշեցինք : (Վ . Պետրոս . Բ : Վործ . Ի :
 Վող . Բ : Յուդ . Է :

Ղուսաւորչեան Բար . եկեղեցին ասոնք և
 ասոնց նման յետամուտ նոր վարդապետու-
 թիւնները և աւելորդապաշտ նախապաշար-
 մունքները , որոնք հակառակ են Ս . Վրոյ և
 մարդկային բանական խղճի կ'ըմնայ արմատախիչ

ընել և աղատել ազգայնութիւնը հաւատացե-
լոց ըղեղին և սրտին վրայ ծանրացած այն սնո-
տիապաշտութիւններէն . որոնք Վ. ուսուածային
շնորհքներէն կ'զրկեն զմարդիկ . և փոխարէն
հոգ կտանի վերանորոգել Վ. Եւտարանական սի-
րոյ Ս. գաշինքը, որ միակ միջոց է զՎ. սու-
ուած ընդ մարդկան հաշտեցնելու և շինու-
թիւն ու խաղաղութիւն երկրի վերահաստատելուն

Մենք լաւ համոզուած ենք թէ՛ Քրիս-
տոսի այն անձնուէր խաչելութեան և սիրոյ
Ս. ուխտին մէջ կ'բովանդակի ընկերօրական
կամ մարդասիրական սկզբունքը՝ և Ս. Վ. Եւ-
տարանին ճշմարիտ աշակերտութեան պարտքը,
սէր, միութիւն, սրբութիւն, արդարութիւն,
խաղաղութիւն և վերջապէս մարդկութեան ա-
մէն կատարելութիւն : Վ. հա այս է փրկչին կամքը
և այս է մեզի աւանդած Ս. պատուէրը թէ՛
« սիրեցէ՛ք զժողովանս » և ահա հոս է ազգին կեանքն
ու ամբողջութիւնը և հոս կ'վերջանայ Քրիս-
տոսի այն կենաց Ս. խօսքը թէ՛ « եթէ ոք գնայ
քի տունջեան՝ ոչ գայթակղի . . . գնացէք ի
լոյսն (Վ. Եւտարանին), զի որդիք լուսոյ եղիջիք »:

Կ. Պօլիս

1868 Մայիս 26

ԼՈՒՍԵՆՈՐՉԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Յայնտամ լինէին և առաջ մարդարեք
ի ժողովրդեանն, որպէս և այժմ ի ձեզ
լինիցին առաջ մարդայեացք, որք սպրդեալ
մաժանեն հերձուածս կորստեան, . . . և
բազումք անկեալ երթիցեն զՏեա խոց
անառակութեանցն. վասնորոյ ճշմարտա-
թեանն ճանապարհ հայհոյիցի, Աշխատ
հոսթեանս մտացածին բանիք անիցեն զձեզ
վտարանդի. Ք. Պետրոս. Ք.—Պ. Վործ
Ի. 29. Կող. Ք. 8. Եւր. Ե. 4.
Մեզն վերջ:



NL0031068



3818